

Գիրքը յուսադատճեհահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅՐ ԵՐԿՐՈՒՄՆԵՐ ԱՐԿԵՐԱԸ ԼՅՅԱՅԱՍ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ԼՈՒՄԻՆԱՏԵԿՆԵՐՆԵՐԻ ԳՐԵՐ:

ՔՐՈՑՆԵ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՐԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄՈՒՍԱՆ "ՏԱՐԱԼՅՅԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻՍԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

www.freebooks.am

ԵՆԴՐՈՒՄԸ ԵՎՐ, ՈՐ ԾԳՏՎՈՒՄ ԵՔ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ:
ՑԱՆԿՈՒՄԸ ԵՎՐ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ՄԻՔ՝ freebooks@rambler.ru

ՀԵՐՈՒՆ ԶԱՅՐԱՄԵՏԻԱՆ

ՀԱՅԿԱՆ և ՊԵՐՍԵՆ



ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՆԵՐՍԵՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

արեւայր
և գիրքը



Երևան-Առիւտասկան գրող: 1987

Հայրապետյան, Ն. Վ.

Հ 2824 Չարենցը և գիրքը.— Եր.: Սովետ. գրող, 1987.— 64 էջ.— (Գրքասերի գ-րան, /ՀՍՍՀ Գրքասերների ընկ.):

Գրքույկում ներկայացված է սովետահայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի գործունեությունը, որպես հրատարակիչ, խմբագիր և գրքասեր:

Հ $\frac{460302.1020}{705(01)87}$

ԳՄԴ 83.827

ՈՒՍԱՆՆԼԻ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ

Հայտնի է, որ Եղիշե Չարենցը հայ, ռուս և համաշխարհային գրականության ու արվեստների մեծ գիտակ էր: Անսահման էին նրա հետաքրքրությունների ու իմացության սահմանները:

Այս իմաստով, ինչպես նաև շարենցագիտության շատ հարցերի լուսաբանման գործում, մեծ ու անգնահատելի ծառայություն կարող է մատուցել բանաստեղծի գրադարանը. ի՞նչ է գերադասել կարդալ Չարենցը, ինչպիսի՞ն է գրքերի ձեռքբերման նրա սկզբունքը, ո՞ր գրքերը և ո՞ր հեղինակներն էին ավելի մոտ ու հարազատ նրա հոգուն և այլն:

Իսկ ի՞նչ գրքեր է հրատարակել ինքը՝ Չարենցը, երբ Պետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչն էր:

Սրանք բոլորը հետաքրքրական հարցեր են, որոնց աշխատել է պատասխանել «Չարենցը և գիրքը» աշխատության հեղինակը:

Բանաստեղծի մասին եղած գիտական աշխատությունների իմացությամբ, ինչպես նաև ժամանակակիցների հուշագրությունների հիման վրա, այստեղ փորձ է արվում ներկայացնել բանաստեղծին իբրև ընթերցող ու հրատարակիչ, ամբողջացնել այս ասպարեզում մինչև այժմ ասվածն ու գրվածը:

Հեղինակը հիմնականում ուսումնասիրել է Եղիշե Չարենցի տուն-թանգարանում պահպանված գրքերը, հավաքել է և ներկայացրել փաստեր այն մասին, թե ե՞րբ և որտե՞ղ է գնել բանաստեղծն իր գրադարանի այս կամ այն գիրքը,

որո՞նք են նրա ձեռք բերած առաջին գրքերը, հատկապես 1920-ական թվականներին Մոսկվայում, ապա Թիֆլիսում, Երևանում, Բաքվում, որո՞նք էին բանաստեղծի նախասիրությունները և այլն: Մանրամասն ներկայացվում են նաև գրադարանի այն գրքերը, որ նրան նվիրել են ռուս և հայ գրչակից ընկերները: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այդ գրքերի վրա եղած մակագրությունները:

Կարևոր է նաև այն, որ այս հարցերը քննվում են ժամանակի հասարակական կյանքի ու հետաքրքրությունների ֆոնի վրա: Աշխատանքը պատկերացում է տալիս նաև այն մասին, թե դարասկզբին ինչ գրքեր էին շրջանառում ռուսական միջավայրում, ազգային-գրական հատվածներում, որոնք անպայմանորեն իրենց ազդեցությունը պիտի թողնեին ժամանակի հայ երիտասարդության աշխարհայացքի ձևավորման վրա թե՛ գրական և թե՛ քաղաքական առումով: Ուստի և փորձ է արվում պարզել, թե ինչ արժեք ու նշանակություն ունեւ գիրքը 1920-ական թվականներին հատկապես հայ ընթերցողի համար:

Հեղինակը Չարենցի կյանքը և ստեղծագործությունը բաժանում է առանձին փուլերի և փորձում է հասկանալ ու բացատրել, թե ամեն մի ժամանակահատվածում ո՞ր գրքերն են նրան գրավել և ինչո՞ւ: Այս կերպ ինչ-որ ձևով սխտեմավորվում են բանաստեղծի ունեցած գրքերը և պարզ է դառնում, թե ինչ տրամաբանությամբ էին հայտնվում գրքերը նրա գրադարանում:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում հատկապես 1910-ական թվականների վերջերի և 1920-ականների սկզբների մոսկովյան միջավայրի նկարագրությունը, որտեղ Չարենցը շփվում էր մայրաքաղաքի գրական հասարակայնության հետ, մասնակցում գրական վեճերին, անձամբ ծանոթանում ժամանակի ռուս գրականության ու արվեստի նշանավոր ներկայացուցիչների հետ, ձեռք բերում նրանց գրքերը, հաճախ հեղինակային օրինակներ:

Այս գրքույկը պարունակում է խիստ հետաքրքրական
ինֆորմացիա, այստեղ ի մի են բերված փաստեր ու ման-
րամասներ, որոնք շատ արժեքավոր են: Ներսես Հայրա-
պետյանի «Չարենցը և գիրքը» աշխատանքը ուսանելի և
օգտակար է ինչպես գրքասեր լայն հասարակայնության,
այնպես էլ գրականագետների համար:

ԱՆԱՀԻՏ ՉԱՐԵՆՑ

**ՉԱՐԵՆՑԸ ԸՆԹԵՐՑՈՂ, ԳՐՔԱՍԵՐ ԵՎ
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ**

Այն, որ ես էի, որ իմն էր առաջ,
Արդեն շի հառնի և ոչ մի գրում...

Ե. ՉԱՐԵՆՑ

Չարենցի հոգևոր մտերմությունը գրքերի աշխարհի հետ սկիզբ է առել դեռևս Կարսում ուսանելու տարիներին: Ռեալական դպրոցի գրադարանում գրքերի բավական հարուստ ընտրություն կար և, բանաստեղծի դպրոցական ընկերների վկայությամբ, պատանի Եղիշեն գրադարանի ակտիվ ընթերցողներից էր: «Մեր ռեալական դպրոցի գրադարանը հարուստ էր ոչ միայն ուրա, այլև այլազգի գրողների ու բանաստեղծների ուսերեն թարգմանված բազմաթիվ հետաքրքիր նկարագարդ գրքերով»¹, — գրում է Չարենցի դպրոցական ընկերը: Չարենցը օգտվել է նաև Կարսի քաղաքային գրադարանից, եղել նրա ամենօրյա այցելուն²: Նա գրքեր էր վերցնում նաև իր դասընկերոջ՝ Նիկոլայ Պոլյակովից, որի ծնողները

¹ Ալեքսանդրյան Արտ., Պատանի Չարենցի հետ (հուշեր): Եր., 1979, էջ 86:

² Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց (մենագրություն), հ. 1, էջ 28:

ուռա և արտասահմանյան գրականությամբ հարուստ գրադարան ունեին: Պոլյակովների գրադարանից Չարենցի կարդացած գրքերից էին Ֆր. Վիյոնի բանաստեղծությունների ժողովածուն և Ստենդալի «Կարմիրը և սևը»³: «Նաիրյան քաղաքի» գորշ ու խեղճ միջավայրում նրա ամենամտերիմ խորհրդատուները գրքերն էին: Կարդացած առաջին գրքերից էին 5-րդ դարի հայ պատմիչների՝ Մովսես Խորենացու, Փավստոս Բյուզանդի, Եղիշեի «Պատմությունները...», Բաֆֆու «Խենթը», Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի և այլոց երկերը: Կարդացած գրքերի շուրջ Եղիշեն և ընկերները տպավորություններ էին փոխանակում. «Եղիշեն սկսեց պատմել Բաֆֆու «Խենթը», որը կարդացել էր վերջին երկու օրը: Նա մեծ հրճվանքով պատմում էր Բայազետի պաշարման մասին, հերոսների ու «Խենթի» մասին, կանգ առնելով նրա «խենթությունների վրա»⁴:

1910-ական թվականներին գրական շուկան ընթերցողին առաջարկում էր ամենատարբեր գրական ուղղությունների ու հոսանքների պատկանող գրականություն: Կարսի գրախանութում գրական անվիճելի հեղինակությունների՝ Հենրիկ

³ Փալանջյան Ա., Դպրոցական տարիներին («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»): Եր., 1961, էջ 48—52:

⁴ Ալեքսանդրյան Արտ., Պատանի Չարենցի հետ, էջ 30:

Իբսենի, Գերհարդ Հաուպտմանի, Մորիս Մետեր-
լինկի, Կնուտ Համսունի, Օսկար Ուայլդի, Շարլ
Բոդլերի, Պոլ Վեռլենի, Լեոնիդ Անդրեևի, Ֆեո-
դոր Սոլոգուբի, Վալերի Բրյուսովի, Վյաչեսլավ
Իվանովի, Հովհաննես Թումանյանի, Վահան Տեր-
յանի երկերի կողքին կարելի էր ձեռք բերել նաև
Ստանիսլավ Պշիբիշևսկու «Homo Sapiens»-ը,
Ֆրիդրիխ Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը»,
Արթուր Շոպենհաուերի «Հոգու անմահությունը»,
Օտտո Վայնինգերի «Սեռ և բնավորություն» գրք-
երը: Ազգային ճակատագրի և քաղաքական
անցքերի խառնակ ժամանակաշրջանում հայ ըն-
թերցողը մատնված էր սեփական ուժերով ճա-
նապարհ հարթելու գրական նորագույն հոսանք-
ների՝ սիմվոլիզմի, իմպրեսիոնիզմի, ակմեիզմի,
ֆուտուրիզմի և այլ «իզմերի» միջով դեպի ճշ-
մարիտ արվեստի գործերը: Շատ հաճախ նպա-
տակաուղղված որոնումների փոխարեն անփորձ
ընթերցողը կուրորեն դեգերում էր գրական լա-
բիրինթում, անվերջ խարխափելով և ինքնաբա-
վություն գտնելով գրքերից քաղած «երազային,
աննյութական իրականության ու անհայտ գա-
ղափարների մեջ» (Աղաբաբյան Ս.): Պատանի
Ծղիշեի համար այդպիսի «յուրահատուկ ավե-
տարան» է դառնում այն ժամանակներում խիստ
հռչակված լեհ գրող Ստ. Պշիբիշևսկու «Homo
Sapiens» գիրքը: «Այդ գրքի թեման Զարենցի
գիտակցության մեջ միանգամայն ինքնատիպ

մեկնաբանությունն է ստանում, մարմնանալով շրջապատից վեր բարձրացող տիտան մարդու՝ փրկչի, կերպարում»⁵: Կարսի քաղաքային զբոսայգու ծառուղիներից մեկում պատանի Ծղիշենուներ իր սիրած նստարանը՝ պոետական մենաստանը, որտեղ ժամերով առանձնանում և նետվում էր ընթերցանության գիրկը.

Նա կարգում էր երկաբ, նստած ալեյում
Այն հին կաղնու ներքեր, որի բնին
Անցյալ տարի ամառը մի տաքզլուխ
Դանակով փորագրել էր «Արփենիկ»:

Կարսը, աշնան այգին, ալեյում կաղնեծառի տակ նրա սիրած նստարանն ուղեկից են եղել Չարենցին ողջ կյանքում, և նա ստեպ-ստեպ իր բանաստեղծություններում անդրադարձել է ընթերցողական առաջին տպավորություններին, ինչպես «Homo Sapiens» շափածո նովելում: Չարենցի մոտ հենց այդ տարիներից է մշակվել անհագ, բուռն, հախուռն ընթերցանության սովորույթը, որը հետզհետե խորացավ և տարիների հետ դարձավ տիրապետող: Հ. Թամրազյանը գրում է, որ «նա (Ծ. Չարենցը — Ն. Հ.) այն գրողներից մեկն էր, որոնց համար գրքերը փոխարինել են «անկյանք կյանքին», եղել են հոգևոր

⁵ Աղաբաբյան Ա., Ծղիշե Չարենց (մենագրություն), հ. 1, էջ 30:

ակունք, բացել են լայն հորիզոն և մեծ ճանապարհ դեպի աշխարհ»⁶։

Պատանի Եղիշեն սկսում է անձնական գրադարան հավաքել։ Պատմում են, որ Եղիշեն հոր՝ Աբգար աղայի տված փողով կոշիկի փոխարեն գիրք էր գնել՝ հարուցելով հոր զայրույթը.

«— Տո դու խելքդ հացի հետ ես կերել, բոբիկ պիտի ման գաս։

Եղիշեն ձայն շհանեց, բայց հետո, երբ դուրս եկանք ու գնում էինք մեր տուն, ճանապարհին ասաց.

— Կավ է ոտքից բոբիկ լինել, քան թե խելքից»⁷։

Միք. Մազմանյանը հիշում է, որ 1912 թ. Եղիշեն, Կարսի գրախանութի ցուցափեղկում տեսնելով Վահան Տերյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն, չի կարողանում զսպել գիրքն ունենալու ցանկությունը և Աբգար աղայի գրպանից «թռցնելով» հարկավոր մեկ ուրբիին, գնում է այն։ «Ասես անհուն մի գանձ նվիրեցին ինձ, զարմանալի հայտնություն եղավ ինձ համար այդ գիրքը, ու էլ ձեռքիցս վայր չդրի։ Առանձնանում էի ու շարունակ կարդում։ Այնպիսի կախարդական ազդեցություն ունեցավ վրան, որ մինչև օրս էլ

⁶ Թամրազյան Հ., Եղիշե Չարենց։ Եր., 1981, էջ 15։

⁷ Ալեխանդրյան Արտ., Պատանի Չարենցի հետ (հուշեր), էջ 24*

չեմ կարողանում առանց հուզմունքի հիշել
այդ»⁸, — վերհիշում է Չարենցը:

Եղիշեն հափշտակվում է ընթերցանությամբ:
Գրքերին էր նվիրվում նրա յուրաքանչյուր ազատ
պահը: Հայրն անգամ գանգատվում էր, թե «էս
մեր փիլիսոփան ճաշի ժամանակ էլ մի ձեռքով
գիրքն է բռնում, մյուսով՝ թանապուրի գդալը»
և որ «վախենում եմ, թե վերջը սոված բանաս-
տեղծ դառնա: Մի գլուխ թղթեր է մրոտում»⁹:

Պատանեկան տարիների ամենասիրած հեղի-
նակը Տերյանն էր: Տերյանի պոեզիայի ազդեցու-
թյունն են կրում Չարենցի վաղ տարիների բա-
նաստեղծությունները, հատկապես նրա «Երեք
երգ տխրադալուկ աղջկան» ժողովածուն: Հետա-
գայում, 20-ական թթ. սկզբներին, Չարենցը
ոգևորված պրոլետարական գրականության ստեղծ-
ման առաջնախնդրով, տարվեց պրոլետկուլտա-
կան գաղափարներով ու դասական ժառանգու-
թյան հանդեպ ժխտողական վերաբերմունքի
տարիներին առժամանակ «մոռացավ» Տերյանին:
Սակայն 20-ական թթ. վերջերին Չարենցը առ-
ընդմիշտ թոթափում է դասական կուլտուրայի
և այդ թվում՝ Տերյանի ժառանգության նկատ-

⁸ Մազմանյան Միք., Չարենցի հետ («Հիշողություններ
Եղիշե Չարենցի մասին»), էջ 60:

⁹ Փալանջյան Ա., Դպրոցական տարիներին («Հիշողու-
թյուններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 48:

մամբ մերժողական վերաբերմունքը, վերադառնում է առաջին սիրույն՝ այլևս երբեք չդավաճանելու: Հասուն տարիների Չարենցի համար Տերյանն ասես խորհրդանշում էր իր պատանեկությունը, ծննդավայրի մասին հուշերը, առաջին սերը.

Միշտ, երբ կարդում եմ Տերյանը,—
Ղարսն է հիշում իմ հոգին:

«Սկզբում Չարենցը Վահան Տերյանի բանաստեղծությունների ընթերցողն էր, ապա՝ նրա «գրական դպրոցի» աշակերտը, այնուհետև դարձավ բանաստեղծական ավանդների շարունակողն ու հարուստացնողը»¹⁰,— գրում է Ս. Աղաբաբյանը:

Եվ առաջինը, որ հանդիպեց
Քեզ ճանապարհին քո ահավոր—
Այն խեղճ պոետն էր, այն սրտաբեկ,
Տխուր պոետը արևավոր:

Չարենցը պաշտամունքի աստիճանի սեր էր տածում Վահան Տերյանի հանդեպ: Տերյանի կյանքի ու ստեղծագործության հետ կապված ամեն բան նշանակալի ու սիրելի էր Չարենցի

¹⁰ Աղաբաբյան Ս, Եղիշե Չարենց (մենագրություն), հ. 1, էջ 70—71:

համար: Անգիր գիտեր Տերյանի բոլոր բանաստեղծությունները: Այդ մասին գրականագետ Խ. Սարգսյանը գրում է. «Տերյանին նա անգիր գիտեր բառիս բուն իմաստով: Տերյանի հատորը նա տալիս էր ձեռքդ ու ասում. կարդա ուզածդ բանաստեղծության առաջին տողը: Կարդում էիր, իսկ ինքը շարունակում էր անգիր արտասանել մինչև վերջը, առանց վրիպումների, անսխալ»¹¹: Հաճախ արտասանում էր նրա «Ոսկեհանդերձ եկար ու միգասքող» և «Մի՞թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծությունները: Շատ հաճախ նա հուզված արտասանում էր Տերյանի հետևյալ քառյակը.

Վտարանդի, երկրում ազոտ,
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք
Արթայական քո լեզուն:

Վերջին տողերն արտասանելիս նրա ձայնը խզվում էր և նա, համարյա միշտ, վերջացնում էր այս քառյակը հուզմունքից լաց լինելով»¹²:
Չարենցը Տերյանին սիրում էր առանձնահա-

¹¹ Սարգսյան Խ., Հուշեր Չարենցի մասին («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 346:

¹² Վևորգ Էմին, Անավարտ հուշեր Եղիշե Չարենցի մասին («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 384:

տուկ սիրով: Այն ամենը, ինչ որ ուղղակի կամ անուղղակի առնչվում էր Տերյանի անվանը՝ Չարենցի համար սրբություն էր: Հին Երևանի բնակիչներից Չարենցին սիրելի էր սրնգահար Ասոն և նա ամեն երեկո Աստաֆյան փողոց էր իջնում նրա սրնգին ունկնդրելու: Սակայն Չարենցին կապողը միայն սրնգի մեղեդին չէր. «Նա Չարենցի համար սիրելի էր ոչ միայն որպես Երեվանի տխուր սրնգահար Ասո, այլև որպես Տերյանի ծանոթ»¹³ (ընդգծումն իմն է— Ն. Հ.): Մեկ այլ դրվագ է հիշում Գուրգեն Մահարին. «Լազարյան ճեմարանի բակում տխրեց.— Տերյանը սովորել է այստեղ, այս դռնով հազար անգամ ներս ու դուրս է արել...— Մենք ի՞նչ ենք որ նրա հետ համեմատած, խուժաններ...»¹⁴: Նրա տերյանապաշտությունը սահման չէր ճանաչում: «Ախ, եթե ես Տերյանից մի նամակ ունենայի, գոնե մի տող, ճակատիցս փակցրած Աբովյան փողոցով հպարտությամբ ման կգայի...»¹⁵,— անթաքույց խոստովանել է Նվարդ Թումանյանին:

¹³ Մկրտիչ Աբմեն, Չարենցը և «Նույեմբերը» («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 223:

¹⁴ Մահարի Գ., Չարենց-նամե («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 177:

¹⁵ Թումանյան Նվարդ, Մեր հանդիպումներից («Հուշեր Եղիշե Չարենցի մասին»): Եր., 1986, էջ 362:

Տերյանի մահվան բոթը Չարենցին հասավ
ամիսներ անց: Սիրած պոետի մահվան ազդե-
ցությամբ նա գրեց իր «Վահան Տերյանի հիշա-
տակին» սքանչելի բանաստեղծությունը.

Եվ երբե՛ք, երբեք չի աղոտի
Քո կանթեղը խավար իմ հոգում,—
Քո կանթեղը— հեռո՛ւ կարոտի:

Չարենցը հոգում անթեղված պահեց տերյա-
նական կապույտ կանթեղը:

Չեռնարկելով բանաստեղծի անտիպ երկերի
հրատարակության գործը, Չարենցը Ա. Խանջյա-
նի կարգադրությամբ, գրականության թանգա-
րանից վերցնում է Վահան Տերյանի ձեռագրերը՝
ժողովածուն կազմելու և խմբագրելու համար:
Այդ մասին Չարենցն իր օրագրում 1934 թ. մար-
տի 14-ին գրել է. «Մի զարմանալի քնքուշ և
խնդագին զգացմունք եմ ունենում յուրաքան-
չյուր անգամ, երբ հիշում եմ, որ այնտեղ, գրա-
սենյակիս դարակում, պահված են Տերյանի—
հասկանո՞ւմ եք— իսկական նրա ձեռագրերը...
Նրա ձեռքով գրված այդ թերթիկները... Երբ ան-
չափ տխուր եմ լինում— հանում եմ և նայում...
Կարծես արեգակն է պահված իմ գրասեղանի դա-
րակում... Այդ մետաքսյա թերթիկները— ծածկ-
ված շինական սև մելանով, գրված շքնաղ, ազ-
նըվական գրերով... Չարմանալի մաքուր և գե-

ղեցիկ ձեռագիր է ունեցել այդ մարդը: Չեռագիրն անգամ նուրբ է, ինչպես նրա ողջ ստեղծագործությունը— նուրբ ու մաքուր: Իմ կյանքի ամենամեծ խնդությունն է դա— հանել մեկ-մեկ այդ ձեռագրերը և նայել...»¹⁶: Ցավոք, անկատար մնաց Չարենցի մտահղացումը: Բանաստեղծի արխիվում պահվում է Տերյանի երկերի ժողովածուի 1-ին հատորի պատրաստի օրինակը, որն այդպես էլ լույս չտեսավ:

Չարենցի ընթերցողական հետաքրքրությունները բուռն զարգացում են ապրել հատկապես 1910-ական թթ. վերջերին և 20-ական թթ. սկզբներին: Հաճախակի լինելով Մոսկվայում, ուսանելով այնտեղ, Չարենցը շփվում է մայրաքաղաքի գրական հասարակայնության հետ, մասնակցում գրական հոսանքների հախուռն բանավեճերին: Չարենցը գրական ասպարեզում առընչվում է Բրյուսովի, Մայակովսկու, Բլոկի, Եսենինի, Սոլոգուբի, Վյաչ. Իվանովի և այլոց հետ, անձնապես ծանոթ էր նրանցից մի քանիսի հետ: Եղիշե Չարենցը համալսարանական կրթություն չի ստացել, սակայն այդ տարիներն իսկական համալսարան եղան նրա համար: Բանաստեղծը, ուր էլ որ լիներ, շարունակում էր իր գրադարանի համար գրքեր հավաքել: Ընդ որում, կրթության

¹⁶ Չարենց Ե., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6: Եր., 1967, էջ 477:

պակասը նա ստիպված էր լրացնել ինքնակրթությամբ: Այդ է պատճառը, որ նրա գրադարանում հանդիպում են գիտության ամենատարբեր բնագավառների վերաբերյալ գրքեր:

Այդ տարիներին Չարենցի գրադարանը հիմնականում համալրվել է գեղարվեստական և փիլիսոփայական գրականությամբ: Չարենցի Մոսկվա կատարած առաջին ուղևորության ժամանակ գնած գրքերից պահպանվել են երկուսը՝ Штөйнер д-р Рудольф. Христианство как мистический факт и мистерии древности.— М., 1910 և Платон. Пир. Беседа о любви.— М., 1910: Պլատոնի հատորյակի վրա Չարենցի ձեռքով մակագրված է. «Եղիշե Սողոմոնյան, 917, 1 մարտի, Փառքի օրը... Մոսկվա»: Հետագա տարիներին Մոսկվայում ձեռք բերած գրքերից կարելի է հիշատակել «Բանբեր գրականության և արվեստի» ժողովածուի Ա և Բ գրքերը (Ս. Պետերբուրգ, 1903—1904), էմինյան ազգագրական ժողովածուի Բ—Թ հատորները, ինչպես նաև «Դոստոևսկին իր դատեր՝ Լ. Դոստոևսկայայի նկարագրությամբ» (Մոսկվա — Պետրոգրադ, 1922), «Զհրատարակված Պուշկինը» ժողովածուն (Պետերբուրգ, 1922), Ի. Սկարտացինիի «Դանթե» (Պետերբուրգ, 1905), Ա. Ն. Ռադիշչևի «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» (Սանկտ-Պետերբուրգ, 1905) և բազմաթիվ այլ գրքեր: Ընդհանուր առմամբ Չարենցի գրադարան-

նում պահպանվող 43 գրքի վրա կա բանաստեղծի ձեռքով արված մակագրությունն այն մասին, որ դրանք գնվել են Մոսկվայում: Առանձնապես շատ գրքեր է գնել 1922 թ.¹⁷ 29 գիրք: Նույն թվականին Պետրոգրադում գնած գրքերից նշում կա 8 գրքի վրա: Մոսկվայում գնված նշումներով գրքեր են պահպանվել նաև 1921, 1923—24, 1929 և այլ թվականներից:

Սակայն միշտ չէ, որ Չարենցը նշում է կատարել գիրքը գնելու ժամանակի և տեղի մասին: Երբեմն նա բավարարվել է միայն նշելով անուն-ազգանունը: Մոսկվայից Մ. Գևորգյանին 1922 թ. հոկտեմբերի 1-ին գրած նամակում Չարենցը հայտնում է. «Այստեղ գրական համարյա թե ոչ մի նորություն: Էյնշտեյնի մասին լույս են տեսել մի քանի գործեր, բայց թանկ են, հնարավորություն չունեմ գնելու: Ինչքան նայեցի՝ Շպենգլերի* մասին նոր բան չկա: Ապագայում եթե եղավ կուղարկեմ»¹⁷: Նույն թվականին Մոսկվայից գրած մեկ այլ նամակով Չարենցը Գ. Աղամյանին հայտնում է. «Գրական նորություններ կան, բայց նամակով այդ մասին բան չես ասի: Շատ-շատ անուններ, որոնք միևնույն է ոչինչ չեն ասի անծանոթ ընթերցողին: Կգամ՝ գրքեր կբերեմ՝ կխո-

* Շպենգլեր Օսվալդ (1880—1936) — գերմանացի իդեալիստ փիլիսոփա:

¹⁷ Չարենց Ե., հ. 6, էջ 390:

սենք»¹⁸: Չարենցի մասին հետաքրքիր տեղեկություններ է բերում Ռ. Զարյանը. «Չկար օր, որ նա գրախանութ չմտներ: Մոսկվայում շրջում էր մի բուկինիստական խանութից մյուսը: Կային հազվագյուտ գրքեր, որ Երևանում կարելի էր միայն բանաստեղծի գրադարանում գտնել: Հաճախ ձեռք էր բերում նույն գրքի տարբեր հրատարակությունները: Ժամերով նայում էր, թե ինչպես է հրատարակված: Հիացմունքով էր արտահայտվում «Academia»-ի* հրատարակություն-

¹⁸ Չարենց Ե., հ. 6, էջ 387:

* «Academia»-ն սովետական հրատարակչություն է, որը հիմնադրվել է 1922 թ. Պետրոգրադում, նախ որպես մասնավոր հրատարակչություն, ապա վերակազմվել է Լենինգրադի արվեստի պատմության պետական ինստիտուտի հրատարակչության: Մոսկվա տեղափոխվելուց հետո 1938 թ. միացել է Գոսլիտիզդատին: Թողարկում էր մատենաշարային գրականություն՝ «Համաշխարհային գրականության գանձեր», «Համաշխարհային գրականության դասականներ» և այլն, ինչպես նաև ռուս և ՍՍՀՄ մյուս ժողովուրդների գրական հուշարձանների հրատարակություններ: «Academia»-ի հրատարակություններն աչքի են ընկնում հանգամանալի գիտատեղեկատու ապարատով, պոլիգրաֆիական կատարման և գեղարվեստական ձևավորման բարձր մակարդակով», — Книговедение: Энциклопедический словарь / Ред. кол. Н. М. Сикорский и др. — М.; 1982, стр. 15: Մեր հաշվումներով ներկայումս Չարենցի անձնական գրադարանում կա «Academia» հրատարակչության տպագրած 167 կտոր գիրք: «Academia»-ի հրատարակությունների մեջ Չարենցի գրադարանում տեղ են զբաղեցրել Հոմերոսի, Սենեկայի,

ների մասին: Եվ դա իր ազդեցությունն ունեցավ նրա հրատարակչական գործունեության վրա»¹⁹:

Բանաստեղծի գրադարանը խոշոր հավելում ստացավ նրա արտասահմանյան ուղևորությունից հետո: 1924 թ. նոյեմբերին Չարենցը մեկնում է արտասահման, լինում է Պոլսում, Աթենքում, Հռոմում, Նեապոլում, Վենետիկում, Փարիզում, Բեռլինում, որտեղից վերադառնում է 1925 թ. հուլիսին: Գուրգեն Հովնանի վկայությամբ. «Եվրոպայի տարբեր քաղաքներում Չարենցը ձեռք է բերում Գյոթեի, Հայնեի, Բայրոնի, Շիլլերի, Վերհարնի, Միցկևիչի և մյուս մեծ գրողների երկերի գեղեցիկ և հազվագյուտ հրատարակությունները: Այդ հրատարակություններից էլ հետագայում նա կատարում է իր մի շարք թարգմանությունները»²⁰: Բանաստեղծի գրադարանում արտասահմանյան ուղևորությունից պահպանված գրքերից կարելի է հիշատակել Մաքսիմ Գորկու «Ռուսական գյուղացիության մասին» (Բեռլին, 1922), Ա. Կանդիվի «Միքելանջելո Բուոնարոտիի կյանքը» (Բեռլին, 1923), էդգար Պոլի «Ընտիր երկերը»

է. Ռոտերդամցու, Պիրանդելլոյի, Բերանժեի, Հայնեի, Պ. Պ. Ռուբենսի, Ստանիսլավսկու, Վյազեմսկու և այլոց երկերը:

¹⁹ Չարյան Ռ., Եղիշե Չարենց: Գրքերի աշխարհ, 1970, նոյեմբեր:

²⁰ Հովնան Գուրգեն, Եղիշե Չարենց (ստեղծագործության միջազգային արձագանքները): Եր., 1978, էջ 10—11:

(Բեռլին, 1923), Ֆ. Մ. Դոստոևսկու «Ոճիր և պատիժ» և այլ գրքեր: Մեկ այլ գիրք Չարենցը գնել է Հոսմում՝ Чаплин / Сб. статей. П. Богатырев. Макс Линдер; В. Шкловский. Ч. Чаплин.— Берлин, Изд. журнала «Кино», 1923: Գիրքը մակագրված է. «Յե. Չարենց. Հոսմ, 925 (II) 24»: Երեք գիրք նա նվեր է ստացել Վենետիկում Ավ. Իսահակյանից՝ «Սիրելի Ե. Չարենցին Ա. Իսահակեանից, 4 մարտի, 1925 թ. Վենետիկ» ընծայագրերով: Դրանք են Վարպետի «Աշնան ծաղիկներ», «Արձակ էջեր», «Հայրենի աղբիւրից» ժողովածուները:

Հիմք ընդունելով ժամանակակիցների վկայությունները, ընթադրվում է, որ Չարենցի գրադարանում եղել է մոտավորապես 6000 կոոր գրականություն: Ներկայումս բանաստեղծի տունթանգարանում պահպանվում է նրա անձնական գրադարանի մի մասը, ավելի քան 1400 հատոր գրականություն: Պահպանված գրքերի մեծ մասը՝ մոտ 1150-ը՝ ուսերեն լեզվով է, 230-ը՝ հայերեն: Կան նաև գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, վրացերեն և ուկրաիներեն լեզուներով մի քանի տասնյակ գրքեր: Գրականության մի նշանակալի մասը հեղինակային ընծայագրերով է: Իր գրքերի վրա Չարենցը սովորաբար մակագրում էր անուն-ազգանունը, ապա ձեռքբերման՝ ամիս-ամսաթիվը և վայրը: Պատանեկան և երիտասարդական տարիներին գրքերին

մակագրել է Եղիշե Սողոմոնյան, իսկ 20-ական թթ. սկսած՝ Եղիշե Չարենց: Նա սովորություն ուներ նշումներ կատարելու կարդացած գրքերի վրա:

Բանաստեղծի գրադարանը համալրվել է ամբողջ կյանքի ընթացքում: Մինչև 1928 թ., երբ Չարենցը անընդհատ տեղից-տեղ էր փոխադրվում, ժամանակավորապես հաստատվելով մերթ Մոսկվայում, մերթ Թիֆլիսում, Բաքվում և ապա կրրկին վերադառնում Երևան, նա «Ամեն անգամ մեծ դժվարություններով սենյակ էր ձեռք բերում, սարքում, անկողին, մահճակալ, գրասեղան նաւում, գրադարան հավաքում, ամենաշատը մի քանի ամսվա համար, ապա քանդում ու մեկնում նորից Երևան կամ Թիֆլիս»²¹ (ընդգծումն իմն է— Ն. Հ.): 1928 թ. սկսած, երբ Չարենցը վերջնականապես հաստատվում է Երևանում՝ աշխատանքի անցնելով Պետհրատում, նրա գրադարանը հատկապես արագ տեմպերով է աճել: Պետհրատում աշխատելիս նա, անշուշտ, ստացել է տպագրված գրքերի մեծ մասը, որոնցից շատերը հեղինակային մակագրություններով: Բացի այդ հայտնի է, որ նա «բուկինիստների ամենալավ բարեկամն էր», կապ ուներ ժամանակի հայտնի բուկինիստների (Տիգրանի, Լաշ-

²¹ Մազմանյան Միք., Չարենցի հետ («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 83:

խոյանի և այլոց) հետ և այդ ճանապարհով գրադարանը համալրում էր հնատիպ և հազվագյուտ գրականություններ: Ցավոք, բանաստեղծի մահից հետո, նրա գրադարանը ցաք ու ցրիվ եղավ: Գրադարանի ամբողջականությունը խիստ վնասվել է: Համեմատաբար բարվոք և ամբողջական է պահպանվել ռուսական գրականությունը: Հատկապես գրքավեր ու խաթարված է գրադարանի հայկական բաժինը: Թեկուզ այն, որ Չարենցի կենդանության օրոք տպագրված 31 գրքերից գրադարանում մնացել են միայն հինգը՝ խոսում է բանաստեղծի գրադարանի տխուր ճակատագրի մասին:

Բացի գեղարվեստական գրականությունից և գրականագիտությունից, Չարենցի անձնական գրադարանում հարուստ են ներկայացված նաև փիլիսոփայության, պատմության, արվեստի և կրոնի բաժինները: Չարենցի գրքերը կարելի է խմբավորել նաև թեմատիկ բաժիններում, որոնցից առավել ուշագրավ են «Արևելք», «Հուշագրություններ», «Պուշկինապատում» բաժինները:

Չարենցի գրադարանը աչքի է ընկնում ֆոնդերի արժեքավորությամբ: Նրանում տեղ են գտել 19-րդ դարի, նախահեղափոխական և սովետական շրջանների նշանավոր հրատարակիչների լավագույն հրատարակությունները: Չարենցի գրադարանում կարելի է գտնել Ֆ. Ա. Բրոկհաուզի, և Ի. Ա. Եֆրոնի, Մ. և Ս. Սաբաշնիկով եղբայր-

ների, Ա. Ս. Սուվորինի, Վ. Մ. Սաբլինի հրատարակած գրքերից, «Պրիբոյ», «էներգիա», «Զարյա», «Վրեմյա», «Ֆեդերացիա», ՕԳԻԶ, ԻԶՕԳԻԶ, «Ալկոնոստ», «Բիբլիոֆիլ», «Դետգիզ», «Academia», Զակկնիզա, Գոսիզդատ և տասնյակ այլ հրատարակչությունների լույս ընծայած գրքեր: Գրադարանի ամենավաղ հրատարակությունը լատիներեն մի գիրք է՝ լույս տեսած 1593 թվականին: Հայերեն ամենահին հրատարակությունը Ն. Շնորհալու «Յիսուս որդին» է (Սանկտ-Պետերբուրգ, 1785):

Եղիշե Զարենցի տուն-թանգարանը գործով է այն տանը, որտեղ կյանքի վերջին տարիներին 1935—37 թթ. բնակվում էր բանաստեղծը: Անցած տասը տարիների ընթացքում թանգարանի աշխատակիցները զգալի աշխատանք են կատարել բանաստեղծի արխիվի և գրադարանի ամբողջացման, նրա անտիպ էջերի հրատարակման ուղղությամբ: Ցավոք, մինչև օրս չի հրատարակվել բանաստեղծի գրադարանի գրացուցակը, որը հնարավորություն կտար գրքերի համալրման աշխատանքներում ընդգրկել գրական լայն հասարակության ներկայացուցիչների:

Զարենցը նախընտրում էր գրքերը հավաքել բնագրի լեզվով: Նրա հավաքածուում գրականությունը հիմնականում հայերեն է և ռուսերեն: Օտար լեզուներով գրքերից պահպանվել են մի քանիսը, որոնց թվում իռլանդացի նշանավոր

պատմաբան Լինչի «Հայաստան» սովարածավալ աշխատության երկու հատորները, Գյոթեի «Ֆաուստը» և այլն:

Հայտնի է, որ բանաստեղծը Կարսի ռեալական դպրոցում սովորել է ֆրանսերեն և գերմաներեն լեզուները: Չարենցը մայրենի լեզվից բացի կատարելապես տիրապետում էր ռուսերենին և թուրքերենին: Բանաստեղծն անգլերեն չի իմացել, սակայն բավականաչափ գիտեր գերմաներեն և կարողանում էր բառարանի օգնությամբ թարգմանություններ կատարել: Ժամանակակիցները վկայում են, որ Պետհրատում աշխատելու տարիներին Չարենցը մտերիմ էր տպարանում աշխատող գերմանացի բանվոր Բոշի հետ, որի հետ դժվար, բայց գերմաներեն էր բացատրվում²²: Թե որքանով էր Չարենցը տիրապետում ֆրանսերեն լեզվին, դժվար է պատասխանել: Համենայն դեպս մեկ-երկու հիշատակություն կա նաև Չարենցի ֆրանսերեն իմացության մասին: Արաքսն իր հուշերում գրում է. «Նա հիանալի տիրապետում էր հայերենին և ռուսերենին, գիտեր եվրոպական այլ լեզուներ, ազատ կարդում էր ֆրանսերեն²³ (ընդգծումն իմն է— Ն. Հ.):

²² Տե՛ս Չարյան Ռ., նույն տեղը: Տե՛ս նաև Գառնիկ Ստեփանյան, Հուշեր Չարենցի մասին («Հուշեր Չարենցի մասին»), էջ 341:

²³ Արաքս, Նա միշտ կենդանի է («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 271:

Չարենցի բանաստեղծական ժառանգության մեջ ուշագրավ տեղ են զբաղեցնում այն ստեղծագործությունները, որոնցում նա խորհրդածում է գրքի դերի և նշանակության, տպագիր խոսքի հարատևության, գրքարվեստի, գրքայինի և իրականության ու բազմաթիվ այլ հարցերի շուրջ: Այդ գործերի թվում կարելի է հիշել «Մակագրություն գրքի վրա», «Քանի անգամ ես թերթել», «Տխուր կարուսել», «Գիքորի երազը», «Ա-ին», «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության», «Դեպի լյառն Մասիս» և ուրիշ բանաստեղծություններ: Այս ստեղծագործությունների մեջ Չարենցն առաջադրում է ինչպես միանգամայն որոշակի խնդիրներ, այնպես էլ գրող-գիրք-ընթերցող համակարգի գրքագիտական թաքուն ելևէջներ, որոնք կարդացվում են միայն բանաստեղծության ենթատեքստում: Մեր ազգային ճակատագրում գրի ու գրչության վիթխարի դերի խորը ըմբռնումից է ընձյուղվել չարենցյան մտքի շողարձակումը, որը հնչում է որպես երգում.

*Ուր էլ լինեմ — չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր...*

Դյուրին չէ պոետի ուղին: «Ընթերցող պոետին» բանաստեղծության մեջ Չարենցը, բնորոշելով քերթողական արվեստում հմտանալու ուղին, գրում է.

Զարմանքով գուցե նայես դու իմ այս
Գրքի էջերին՝ թե՛ անշուք, թե՛ պարզ,
Հեզնանքով գուցե ժպտաս ու ասես,
Թե պոետը մեր այս ո՞ւր է հասել...
Բայց հասել է նա մի շինջ պարզության,
Որ ձեռք է բերվում «դժվար վարժությամբ»:

«Դժվար վարժությամբ» ծնունդ առավ Զարեն-
ցի վերջին ժողովածուն՝ «Գիրք ճանապարհի»-ն.
«Զարենցը հավանորեն զգացել էր, որ սա լինե-
լու է իր վերջին, ամենավերջին մատյանը, ուստի
և գրում էր դարերի համար, դարերին հանձնելու
իր մտքերն ու պատվիրանները»²⁴: Իր ստեղծագոր-
ծական առաքելությունը երկրի և ազգի ճակատա-
գրին ծառայեցնելու ազնիվ մտավախությամբ և
տազնապով է առկեցուն «Իեպի լյառն Մասիս»
պոեմի հետևյալ հատվածը.

... և այդ գիրքը՝
Իր արյունով, սրտի յուրաքանչյուր նյարդով,
Իր վերջին ճիգով հորինած—
Չէ՞ արդյոք խեղճության ու սխալի արդյունք՝
Սերունդների երթին ի վնաս...

Սերունդների երթին հանձնելով իր գիրքը, Զա-
րենցն ապավինում էր միայն և միայն ընթերցողի
սրտին.

²⁴ Աղաբաբյան Ս., Եղիշե Զարենց (մենագրություն),
հ. 2, էջ 252:

Լավ եմ գրել ես, թե վատ—
Սրտովդ իմացիր,—
Չկա ուրիշ քննադատ
Քո սրտից բացի:

Սակայն, իրավամբ, գրքին, գրքարվեստին նվիրված շարենցյան էջերի պսակն են կազմում «Տաղ՝ ձոնված մանրանկարիչներին» և «Տաղ՝ ձոնված գրքերին» բանաստեղծությունները: Չարենցը այս երկու տաղերում անդրադարձել է ձեռագիր և տպագիր գրքերի աշխարհին: Եթե առաջին բանաստեղծության մեջ արտահայտված է Չարենցի հիացմունքն ու ակնածանքը միջնադարյան գրիչների անմեռ արվեստի նկատմամբ, ապա երկրորդում նա խորհում է աշխարհի մասին անձուկ ու մտերիմ բարբառող տպագիր գրքերի շուրջ: Հանրահայտ է «Տաղ՝ ձոնված գրքերին» բանաստեղծության առաջին տողը, որ տաղի մեջ կրկնվելով շորս անգամ, առանձին մթնոլորտ է ստեղծում և բանաստեղծությանը բերում անկրկնելի հմայք ու հարկավոր ուրիշ:

Օ՛, գրքերի աշխարհը— տիեզերք է անեզր:

Չարենցն անսանձ պաթոսով հիմներգում է գրքերի աշխարհը, նրանց «բազմախորհուրդ ինքնությունը դաշն, անկրկնելի»: Երկու գործերն էլ պատկերավորման գեղանկարչական արտահայտչականություն ունեն, ինչպես.

Այսպես նստած դարեր՝ ոսկեղենիկ գրչով
Ճորտությո՛ւնն են իրենց ոսկեզօծել,—
Ինչպես նստեր այսօր մի հանճարեղ աղջիկ
Նվ գիշերվա խավարը ասեղնագործեր...

Կամ՝

Արեգակի բուլո՛ր երանգների նման,
Տիեզերքի նման բազմալեզու—
Նս սիրում եմ նրանց երփներանգ
Այս հուրերը կիզո՞ւն:

1928 թ. հունիսի 1-ից Չարենցն աշխատանքի է անցնում Պետհրատի գեղարվեստական ենթաբաժնում, որպես վարիչ, ապա՝ 1930 թ. հունիսի 1-ից նշանակվում է նախկին ենթաբաժնի փոխարեն կազմակերպված գեղարվեստական բաժնի վարիչ: Չարենցը Պետհրատում աշխատել է մինչև 1935 թ. մարտ ամիսը: Նրա գլխավորությունամբ Պետհրատը բուռն հրատարակչական գործունեություն ծավալեց դասական և ժամանակակից գրողների երկերի հրատարակության ուղղությամբ: Չարենցը կենդանի դասականներին (Շիրվանզադե, Նար-Դոս) հրատարակելու սկզբնավորողը եղավ՝ լույս ընծայելով նրանց երկերի բազմաստոր ժողովածուները: Նրա նախաձեռնությամբ սկսվեց նաև Հ. Պարոնյանի երկերի տասնատորյակի, Ե. Օտյանի ընտիր երկերի միաստորյակի տպագրությունը²⁵: Այդ տարիներին Չարենցը մեր

²⁵ Նորեկնց Վաղարշակ, Հուշեր և արձագանքներ: Եր., 1968, էջ 120:

գրահրատարակչության մեջ նույն դերը կատարեց, ինչ որ Գորկին՝ ռուս և սովետական գրահրատարակչական պրակտիկայում:

Չարենցն առաջինն էր, որ առաջ քաշեց արևմրտահայ գրողների երկերի հրատարակության հարցը: Նրա հանձնարարականներով լույս տեսավ «Արևմտահայ բանաստեղծներ» ժողովածուն: Ապա հրատարակվեցին Մ. Մեծարենցի, Սիպիլի, Պ. Դուրյանի երկերը: Հրատարակության էին պատրաստվում Դ. Վարուժանի և Գր. Զոհրապի գրքերը: Չարենցի նվիրական իղձերից էր նաև Սիամանթոյի երկերի հրատարակումը: Չարենցը «նույնպիսի խանդաղատանքով էր սիրում Մեծարենցին, որքան և Տերյանին, Վարուժանի պոեզիան համարում էր հայրենի գրականության փառքերից մեկը, Սիամանթոյի արվեստը համարում էր անհասանելի կատարելություն»²⁶:

Պետհրատի հրատարակչական ընդգրկումները խիստ լայն են այդ տարիներին՝ հայ, ռուս, սովետական ու արտասահմանյան գրականության ամենատարբեր ներկայացուցիչներ, համաշխարհային գրականության գազաթներ՝ Դոստոևսկի, Տուրգենև, Պուշկին, Լերմոնտով, Շեքսպիր, Սերվանտես, Սվիֆտ, Բալզակ, Ռեմարկ, Թոմանյան և շատ այլ անուններ: Ըստ էության Չարենցը

²⁶ Նորենց Վ., Հավերժ կենդանի դեմք («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 195:

ղեկավարում էր ոչ միայն գեղարվեստական բա-
ժինը, գործնականում նրան էին դիմում բոլոր
հարցերով: «Չարենցն ինքը Պետհրատն էր»²⁷,—
ասում է Ա. Հայրյանը՝ Պետհրատի շարենցյան
տարիների աշխատակիցը:

Չարենց-հրատարակչին չի զիջում Չարենց-
խմբագիրը և Չարենց-թարգմանիչը:

Նա տվել է խմբագրական գործի մնայուն ար-
ժեք ներկայացնող նմուշներ՝ հրատարակության
նախապատրաստելով Թումանյանի «Գեղարվես-
տական երկերը», Սունդուկյանի «Կատակերգու-
թյուններ, արձակ էջեր, նամակները», Օտյանի
«Երկերի ժողովածուն» և այլն: Չարենցի խմբ-
ագրական ժառանգության մեջ առանձնահատուկ
տեղ է գրավում գրական տեքստերի հրատարակ-
ման սկզբունքների մշակման հարցը: Հատկա-
պես ուսանելի են նրա 1922 և 1932 թթ. «Երկերի
ժողովածուների» հեղինակային առաջաբանները՝
«Երկու խոսքերը»: Չարենցը վճռական էր համա-
րում որևէ հեղինակի երկերը դասավորելիս
առաջնորդվել ժամանակագրական կարգով, քա-
նի որ տվյալ ստեղծագործությունը «... գրվում է
տվյալ թվականին ոչ թե պատահամբ, այլ, եթե
կարելի է այսպես արտահայտվել՝ ներքին ժամա-
նակագրական կարգով, որը և ամենաէականն է

²⁷ Հայրապետյան Ն., Չարենցը՝ գեղարվեստական գրա-
կանության ընթերցող: Մանկավարժ, 1986, 4 ապրիլի:

որևէ բանաստեղծի հասկանալու համար»²⁸։ Հովհ. Թումանյանի «Գեղարվեստական երկերի» «Խրմ-բագրողի կողմից» առաջաբանում Չարենցը սովետահայ իրականության մեջ առաջին անգամ հիմնավորում է գիտական տեքստաբանության հարցերը²⁹։ Նա գրում է, որ Թումանյանի այս ժողովածուն «ամենալրիվն է բոլոր մինչև օրս գոյություն ունեցողներից և միակը, որի բոլոր տեքստերը համեմատված են գոյություն ունեցող բնագրերի հետ»³⁰։ Չարենցը հատկապես դնում էր գիտական հրատարակությունների նախապատրաստության հարցերը։ Նա պարտադիր էր համարում գրողի երկերի լիակատար ժողովածուն հրատարակել անպայմանորեն հարուստ ծանոթագրություններով, մատենագիտական օժանդակ ապարատով, ժամանակագրական ցանկերով, ձեռագրերի, սևագրերի, տարբերակների, նամակագրության լիակատար ցանկով։ Այդ հարցում նա հետևում էր հատկապես «Academia» հրատարակչության գործունեությանը։ Կ. Միքայելյանին հանձնարարելով թարգմանել Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունները» Չարենցը 1931 թ. սեպտեմբերի 3-ի նամակում գրում է. «... Թարգմանությունները պետք է կատարվեն անպայման ուսական «Academia» հրատարա-

²⁸ Չարենց Ե., հ. 6, էջ 8։

²⁹ Աղաբաբյան Ս., նշվ., աշխ., հ. 2, էջ 216։

³⁰ Չարենց Ե., նշվ. աշխ., էջ 251։

կուլթյունից՝ ի նկատի ունենալով անգլերեն բնագիրը»³¹։ Իր հրատարակչական պրակտիկայում հետևելով «Academia»-ի օրինակին, Չարենցը գրքերի հրատարակման տարեթիվը նշանակել էր տալիս հռոմեական թվանշաններով։

Չարենցի խմբագրական գործունեության օրգանական շարունակությունը և լրացումն է հանդիսանում նրա գործունեությունը որպես կազմողի։ Նա կազմել է մեկ տասնյակից ավելի դասագրքեր, որոնց թվում հատկապես արժանահիշատակ են 1929 թ. լույս ընծայված վրացական, ադրբեջանական, ռուսական և եվրոպական գրականության «Նմուշները...»։

Միք. Մազմանյանի հուշերում հիշատակվում է մի ուշագրավ դրվագ։ 1921—22 թթ. Չարենցը մտադիր է եղել կազմելու «Դիմանկարներ» վերնագրով մի գիրք, որտեղ ներկայացվելու էին հայ բանաստեղծների ստեղծագործական ուղիները։ Գրքում Չարենցը ծրագրել էր ընդգրկել Դուրյանին, Թումանյանին, Իսահակյանին, Մեծարենցին, Տերյանին, Սիամանթոյին և ուրիշների։ Տասներկու բանաստեղծների բնութագրերն էին ընդգրկված նրա նախնական ուրվագծերում։ Սակայն իր այդ ուսումնասիրությունը նա թողեց անավարտ և այլևս չվերադարձավ դրան³²։

³¹ Նույն տեղը, էջ 512։

³² Տե՛ս Մազմանյան Միք., Չարենցի հետ («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 63։

Չարենցի կատարած առաջին թարգմանությունները լույս տեսան 1923 թ.: Բանաստեղծը թարգմանություններ է կատարել է. Վերհարնի, Ու. Ուիտմենի, Հ. Հայնեի, Ս. Եսենինի, Մ. Լերմոնտովի, է. Պոտիեի, Ն. Նեկրասովի, Վ. Բրյուսովի, Դ. Բեդնու, Վ. Մայակովսկու, Վ. Գյոթեի, է. Ռեմարկի, Մ. Գորկու և այլ գրողների գործերից: Թարգմանական աշխատանքներում Չարենցի համար առաջնային կարևորություն ուներ թարգմանվող գործի ոչ միայն իմաստի ճիշտ վերարտադրումը, այլև ստեղծագործության ոգին պահպանելու խնդիրը: Խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում կարգադրած իր զեկուցման մեջ Ե. Չարենցը որոշակի խնդիրներ էր առաջադրում համագումարի պատգամավորներին սովետական բազմազգ գրականությունը փոխադարձ թարգմանություններով հարստացնելու ուղղությամբ: Չարենցը առաջադրում էր միմյանց ճանաչել «... ոչ միայն երկու-երեք պատահական թարգմանությունների միջոցով, այլ, որ ամենակարևորն է, ստեղծագործական փորձի կենդանի փոխանակման, փոխադարձ թարգմանությունների միջոցով»³³:

Ինչի էլ որ ձեռնարկում էր Չարենցը՝ լիներ դա խմբագրի, թարգմանչի կամ կազմողի աշխատանք, դրան վերաբերվում էր ոչ որպես պար-

³³ Չարենց Ե., հ. 6, էջ 274:

տականության, այլ աշխատում էր թափանցել տվյալ ստեղծագործության էության մեջ, ըմբռնել հեղինակային գաղափարն ու ոգին: Խմբագրելով Շեքսպիրի «Լիր արքայի» Հ. Մասեհյանի թարգմանությունը, Չարենցն այն նախ համեմատում է ուսերեն և գերմաներեն հրատարակությունների հետ, ապա խմբագրում և ճշտումներ է կատարում Մասեհյանի թարգմանության վրա: Չարենցն այնքան էր տարվել Շեքսպիրի ողբերգությունամբ, որ հետևյալ խոստովանությունն է արել. «Զգում եմ, Լիրը հոգուս մեջ է, կարծես մի հարազատ անձ լինի, այնպես եմ զգում նրան»³⁴:

Դժվարին ժամանակներ էին: Ամենալավ գրքի երազելի տպաքանակը հազիվ 4 հազար օրինակի էր հասնում և դեռ շաբաթներով ու ամիսներով մնում էր գրախանութներում³⁵: Կուլտուրական հեղափոխության ծրագիրը նոր-նոր թափ ու ծավալում էր ստանում: Ժամանակի հրամայականով ասպարեզ իջան սովետահայ մշակույթի մի խումբ երախտավորներ, որոնք առաջագնացներ եղան՝ ճանապարհ հարթելով սերունդների համար: Ճարտարապետությունը տվեց Ալ. Թամանյան, կերպարվեստը՝ Հակոբ Կոչոյան և Մարտիրոս Սարյան, երաժշտությունը՝ Ալ. Սպենդիար-

³⁴ Չարյան Ռ., Չարենցի հետ («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 366:

³⁵ Բես Գ. Բ., Հուշանովելներ: Եր, 1985, էջ 198—200:

յան, գրադարանաշինությունը՝ Երվանդ Թադիա-
նոսյան, գրականությունը և գրահրատարակչու-
թյունը՝ Եղիշե Չարենց:

Չարենցի գրահրատարակչական գործունեու-
թյան սկիզբը զուգահիսեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի
1928 թ. դեկտեմբերի 28-ի «Մասսայական ըն-
թերցողին գրքով սպասարկելու մասին» հայտնի
որոշմանը, որը պայմանավորեց նրա գործունեու-
թյան մի խոշոր բնագավառը՝ «Պետհրատի էժա-
նագին գրադարան» մատենաշարի ստեղծումը:
«Հարկավոր է բանվորի տղուց պրոֆեսորներ ձու-
լել»,— գրում է Չարենցը, իսկ դրա համար «հար-
կավոր են գրքեր, թերթեր»: Մատենաշարի ցածր-
որակ թղթով և ստվարաթղթե կազմերով տպա-
գրված գրքերը՝ պարզ, համեստ ձևավորումով,
հենց այդ նպատակն էին հետամտում:

Չարենցն առանձնակի հոգատարությամբ էր
վերաբերվում երիտասարդ գրողներին, օգնում էր
նրանց ինչով կարող էր: Դեռ նախքան Պետհրա-
տում աշխատելը՝ «Նոյեմբեր» գրական ընկերու-
թյունը գլխավորելիս, նա կառավարությունից
որոշ գումար ստացավ ընկերության հրատարակ-
չական գործը կազմակերպելու համար: Այդ գու-
մարով նա հրատարակեց Գ. Մահարու, Մ. Ար-
մենի, Ան. Վարդանյանի, Վ. Նորենցի գրքույկ-
ները: Ինչպես հիշում է Նորենցը. «Այդ հրատա-
րակչության ամբողջ ապարատը միայն... ինքն
էր, Չարենցը՝... և դիրեկտոր, և խմբագիր, և

սրբագրիչ, և հաշվապահ, և գանձապահ... և այդ բոլորը... առանց աշխատավարձի»³⁶, Պետհրատում նույնպես նրա առաջին հոգատարությունը երիտասարդ գրողներն էին՝ Խ. Դաշտենցը, Թ. Հուրյանը և այլոք: Չարենցի նախաձեռնությամբ Պետհրատում հիմնադրված մատենաշարերից կարելի է թվել «Երիտասարդ գրողներ», «Կոմերիտական գրողներ», «Գրականության բանվոր-հարվածայիններ», «Պրոլետ-գրականության բանվոր հարվածայիններ» և այլ մատենաշարեր:

Չարենցի հրատարակչական նախաձեռնություններից մեկն էլ Պետհրատի երաժշտական բաժնի հիմնադրումն էր: Նրա օրոք սկսվեց նուտային գրականության հրատարակությունը: Չարենցի նախաձեռնությունն է «Երաժշտությունը մասսաներին», «Ակումբային երգեցիկ խմբերի ռեպերտուար» «Պիոներական երգեր» մատենաշարերի ստեղծումը: Չարենցի հանձնարարականով է տպագրվել Առնո Բաբաջանյանի «Պիոներական քայլերգը»:

Եղիշե Չարենցն իր շուրջն էր համախմբել ժամանակի շնորհաշատ ուժերը: Նա «հաճախ էր լինում տպարանում, միջամտում էր շարվածքին, մանավանդ որ լավ գիտեր տառատեսակները, հուշում էր «պետիտ», «նոնպարել»: Գերապատվությունը տալիս էր միշտ «Արամյանին», իր

³⁶ Նորենց Վ., Հավերժ կենդանի դեմք, էջ 191:

խմբագիր լինելը նշում էր անպայման «վիեննականով»³⁷: Տաղանդավոր նկարիչ Տաճատ Խաչվանքյանը և պոլիգրաֆիստ Մինաս Էֆրիկը նրա աջ ու ձախ ձեռքերն էին: Չարենցը խիստ ուշադիր էր հրատարակվող գրքերի ոչ միայն բովանդակության, այլև արտաքին տեսքի հանդեպ: Հետևում էր, որ գրքերը հրատարակվեին հարմար ֆորմատով, ճիշտ և ճաշակով ձևավորված տիտղոսաթերթով: Գիրքը նա դիտում էր որպես ձևի ու բովանդակության ամբողջություն, գեղարվեստական ներդաշնակ մի կառույց: «Այ տղա, դու պատկերացնո՞ւմ ես գեղեցիկ մի կին՝ փնթի հագնված, ըշտե գիրքն էլ այդպիսի բան է»³⁸, — ասում է Վ. Նորենցին: «Չարենցը, որպես գրքի հրատարակիչ, սերտ, գործունյա կապ էր ստեղծել լավագույն նկարիչների հետ՝ Մ. Սարյանի, Տ. Խաչվանքյանի և ուրիշների: Նա կարողանում էր որոշել, ո՞ր գիրքն ո՞ւմ վրձնին է սազական: Միաժամանակ նա շափազանց բժախնդիր էր դեպի յուրաքանչյուր նկարչական գործ: Ամեն մի գրքի շուրջը նա երկար զրույց էր ունենում նկարչի հետ, նրան ոճական ուղղություն էր տալիս, որպեսզի գիրքը զգեստավորվեր իր բովանդա-

³⁷ Չարյան Ռ., Եղիշե Չարենց: Գրքերի աշխարհ, 1970, նույնամբեր:

³⁸ Նորենց Վ., Հուշեր և արձագանքներ, էջ 119:

կուլթյան համաձայն»³⁹, — գրում է Հ. Կոչոյանը: Չարենցի օրոք են հրատարակվել գրքարվեստի, հայ գրահրատարակչական մշակույթի այնպիսի անզուգական նմուշներ, ինչպիսիք են Հակոբ Կոչոյանի ձևավորմամբ լույս ընծայված Չարենցի «Գիրք ճանապարհին», Բակունցի «Սև ցելերի սերմնացանը», Գորկու «Բանաստեղծույթյունները և լեզենդները», «Սասնա ծռերի» Ա հատորը, Մարտիրոս Սարյանի նկարազարդած Գ. Մահարու «Մրգահասը», Ֆիրդուսու «Ռոստամ և Ջոհրաբը», Հովհաննես Շավարշի ձևավորած Գեղամ Սարյանի «Միջօրե» ժողովածուն և այլն:

Գրքի ձևավորմանն ու նկարազարդմանը հատկացված Չարենցի ուշադրությունը բոլորովին էլ պատահական չէր: Դա նրա մոտ սկզբունք էր, որ բխում էր գրքերի հանդեպ նրա մեծ սիրուց: Չարենցի նախաձեռնությամբ 1930 թ. հունիսի 17-ին Գրողների տանը կազմակերպվել է «Գրքի կուլտուրայի մասին» բանավեճ, ուր զեկուցումով հանդես է եկել ինքը⁴⁰:

Ժամանակակիցների վկայությամբ Չարենցը խիստ լավատեղյակ էր գրքի, գրքարվեստի ցանկացած բնագավառին: Նա հրաշալի գիտեր հայ

³⁹ Կոչոյան Հ., Հանդիպումներ հայ մեծ բանաստեղծ Ե. Չարենցի հետ («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 304:

⁴⁰ Դավթյան Հ., Գեղարվեստական գրականության և գրականագիտության մատենագիտություն: Եր., 1981, էջ 25:

ձեռագիր և տպագիր գրքի պատմությունը: Պատահական չէ, որ նրա անձնական գրադարանում տեղ են գտել գրքագիտական-մատենագիտական բնույթի գրքեր, այդ թվում Լեոյի «Հայկական տպագրությունը», Գ. Զարբհանալյանի «Պատմություն մատենագիտության միջին և նոր դարուց Արևմուտս», Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը»: 1931 թ. օգոստոսի 14-ին մասնակցելով Թիֆլիսում կայացած խորհրդակցությանը, Զարենցը հանդես է եկել զեկուցումով, որը նրա հետ միասին խորհրդակցությանը մասնակցած Գևորգ Պարիսի վկայությամբ «ոչ թե հաշվետվության բնույթ կրող սովորական զեկուցում էր, որպիսին տրվում է նման խորհրդակցություններում, այլ՝ հայկական տպագրության և հրատարակչական գործի վերաբերյալ փայլուն մի դասախոսություն՝ սկսած Հակոբ Մեղապարտի ժամանակներից մինչև այդ օրերը»⁴¹:

Գրքի նկատմամբ ընթերցողների բարեխիղճ վերաբերմունքի հարցը նույնպես դուրս չի մնացել նրա հետաքրքրությունների շրջանակից: Այդ հարցն է շոշափվում հատկապես Ս. Մարշակից կատարած նրա մի փոխադրության մեջ՝ «Գիքորի երազը» վերնագրով, որը լույս է տեսել «Հերմես» տպարանում 1929 թ.: Բանաստեղծությունը

⁴¹ Հակոբյան Գ., Կենսագրական պատառիկներ (Զարենցյան ընթերցումներ): Եր, 1979, գիրք 4, էջ 190:

փոխադրվել է հատկապես մանուկ ընթերցողների համար և ունի ուսուցողական, դաստիարակչական նշանակություն.

Ու կազմատնից դուրս եկան նրանք՝
Թերթերը մաքուր, կողերին կաշի,
Եվ թերթիկների, էջերի վրա
Ոչ թանաք կա էլ, ոչ թանձր փոշի:

1933 թ. մայիսի 10-ին նացիստական Գերմանիայում բորբոքվեցին առաջին խարույկները, որոնցում ֆաշիստ բարբարոսները այրեցին հանուր մարդկությանը պատկանող հարյուրավոր անմահ ստեղծագործություններ: Բուրգեր հիշեցնող գրքերի հսկայական շեղջերում հրո ճարակ դարձան Մարքսի, էնգելսի, Լենինի, Պուշկինի, Տոլստոյի, Մաննի, Ֆոյխսթվանգերի, Ռեմարկի և այլոց երկերը: Ով-ով, սակայն Չարենցն անտարբեր մնալ չէր կարող: Այդ իրադարձությունների անմիջական արձագանքն է նրա հետևյալ ուրբայինը.

Արևուտքում, Գուտենբերգի հայրենիքում հարազատ,
Խարույկներ են վառում այսօր, այրում գրքեր բյուրհազար...

Չարենցի, որպես գրքասերի և ընթերցասերի գրքագիտական-մատենագիտական իմացությունը կուռ կառուցվածք ունի: Կարինե Քոթանջյանի

վկայությամբ, Մոսկվա կատարած իր առաջին ուղևորության ժամանակ, Չարենցը 1916 թ. աշնանն ընդունվել է Շանյավսկու համալսարանի պատմագրական ֆակուլտետը⁴²: Հայտնի է, որ «1913 թ. հասարակության նախաձեռնությամբ Շանյավսկու անվան ժողովրդական համալսարանին կից Մոսկվայում բացվեցին Ռուսաստանում առաջին գրադարանային դասընթացները»⁴³: Շատ հնարավոր է, որ Չարենցը առնչումներ է ունեցել այդ դասընթացների հետ, որը և հետագայում նպաստել է նրա գրքագիտական-մատենագիտական գիտելիքների ձևավորմանը:

Ժամանակակիցների վրա մեծ տպավորություն էր թողնում բանաստեղծի գրադարանը, «Ես մի հայացքով շափեցի Չարենցի առանձնասենյակը, որի պատերը ներկված էին մուգվարդագույն, բայց պատերի քիչ մասն էր ազատ և մեկ էլ առաստաղը, շորս դին պատած էր գրապահարաններով, գրքեր, անվերջ գրքեր»⁴⁴, «Շփոթված կանգ առա, գրքերը դրի հատակին և նոր միայն նկատեցի սենյակը, հատակի կարմիր գորգը, Բուդդայի արձանը, Արփիկի նկարը, շինական

⁴² Քոթանջյան Կ., Հիշողություններ Չարենցի մասին: Սովետ. գրականություն, 1967, № 9, էջ 21:

⁴³ Զուրաբյան Օ., Ընդհանուր գրադարանագիտություն: Եր., 1963, էջ 281:

⁴⁴ Արաֆա, Նա միշտ կենդանի է, էջ 276:

հեքիաթային պաննոն և գրքեր, գրքեր, գրքեր»⁴⁵։

Նրանք շահ տ են ու բազմապիսի, տարբեր ու գունագեղ,
Ծնված զանազան դարերում ու երկրներում,
Յուրաքանչյուրը բերում է մի առանձին պարզև,
Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է կրում։

Չարենցի գրադարանից ստացած ուժգին տպա-
վորության վերհուշը կա բանաստեղծի բոլոր ժա-
մանակակիցների հուշերում։ Որտեղ էլ ապրելիս
է եղել նա, միշտ իրեն շրջապատել է գրքերով։
Այդ են վկայում Նորենցի, Ալազանի, Խ. Սարգրս-
յանի, Միք. Մազմանյանի, Վ. Անանյանի, Խ. Դաշ-
տենցի, Դ. Դզնունու, Ս. Կապուտիկյանի, Խ. Բար-
սեղյանի, Հ. Պողոսյանի և այլոց հուշերը։ Չարեն-
ցի մասին հրապարակի վրա եղած սովոր գրա-
կանության մեջ միայն մեկ հիշատակություն կա,
որտեղ Չարենցը ներկայացվում է առանց իր
«խոհերի վսեմ այրուձիու», այսինքն՝ գրքերի։
Արձակագիր Ռիչի Դոստյանն իր հուշերում պատ-
մում է Թիֆլիսում 1933 թ. դեկտեմբերի սկզբ-
ներին կայացած իր և բանաստեղծի հանդիպման
մասին. «Հիշում եմ շատ փոքր և ամալի մի սեն-
յակ, առանց պարտադիր գրապահարանի, ինչ-
պես ընդունված էր ամենուրեք։ Առհասարակ

⁴⁵ Էմին Գևորգ, Անավարտ հուշեր Եղիշե Չարենցի մա-
սին, էջ 381։

առանց գրքի...»⁴⁶: Չարենցը Թիֆլիսում էր գտնւ-
վում կարճատե այցով: Նկարագրվող սենյակը
պատկանում էր մի հայ բժշկի, որի մոտ հյուր-
ընկալվում էր Չարենցը: Մնում է ենթադրել, որ
ուղևորվելիս նա իր հետ գրականութուն չի վերց-
րել, շնայած, դժվար է պատկերացնել Չարենցին
առանց գրքերի:

Սիրած գրքերից Չարենցը գնում և պահում
էր մի քանի օրինակ և հաճախ դրանք մակա-
գրությամբ նվիրում էր իր բարեկամներին: Շատ
գրքեր նրա գրադարանում ներկայացված են
տարբեր հրատարակութուններով: Չեռք բերելով
որևէ գրքի վերահրատարակութունը, նա չէր
շտապում հրաժարվել նախորդ հրատարակության
ծառայութուններից:

«Նրա վրա ցնցող տպավորութուն էր թող-
նում լավ գիրքը, լավ բանաստեղծութունը, բա-
նաստեղծական լավ տողը»⁴⁷, — գրում է Գուրգեն
Մահարին: Վ. Նորենցը հիշում է Չարենցի հետ
ունեցած հանդիպումներից մեկը, երբ բանաս-
տեղծը ցույց է տալիս մի հին ձեռագիր մատյան,
որի ձևավորման, ձեռագրի, ծաղկելու արվեստի
մասին նրանք երկար զրույց են ունենում: Խոսք
է բացվում նաև ծաղկողի ու գրիչի անձի շուրջը.

⁴⁶ Չարենց Ե., Անտիպ և շավաքված երկեր: Եր., 1983,
էջ 515:

⁴⁷ Մահարի Գուրգեն, Չարենց-նամե («Հիշողութուններ
Եղիշե Չարենցի մասին»), էջ 181:

«Ոչ, անկարելի է այդ, — առարկում է Չարենցը, — այսպիսի գեղեցկություն ստեղծողն անպայման գեղեցիկ հոգու և մեծ սրտի տեր մարդ է եղել: Կարող է պատահել, որ նա Ֆիզիկապես աչքի ընկնող որևէ գեղեցկություն չի ունեցել, սակայն հոգին, հոգին գեղեցիկ է եղել»⁴⁸:

Չարենցն ընթերցում էր կրթոտ և շատ: Անգիր հիշում էր կարդացած գրքերից մեծածավալ հատվածներ: Շատերին է զարմացրել նա իր բնատուր հիշողությամբ: Պատահել է, որ որևէ թեմայի շուրջ բանավիճելիս նա անսխալ նշել է իր գրադարանում եղած հարկավոր գրքի տեղն ու էջը: Այդպիսի մի դրվագ է հիշում Արաքսը. «... էլի ինչ-որ բան էր ուզում մեզ ապացուցել, կանչեց.

— Իզարբելլա...

Մյուս սենյակից ներս մտավ կինը:

— Այս դիմացի պահարանի 3-րդ շարքից հանիր կարմիր կողքով գիրքը, բացիր 150-րդ էջը...

Կրկին անգամ նա զարմացրեց մեզ իր հիշողության պայծառությամբ, ոչ մի հիվանդություն, ոչինչ չէր կարող մթազնել այն: Փակ աչքերով ուզած գրքերի էջերն էր ցույց տալիս, այս կամ այն տողերը անգիր ասում...»⁴⁹:

⁴⁸ Նորենց Վ., Հավերժ կենդանի դեմք, էջ 201:

⁴⁹ Արաքս, նա միշտ կենդանի է, էջ 277:

Նույնական մի դեպք է պատմում նաև Հռիփսիմե Պողոսյանը. «... Հռիփսիմե, նեղություն քաշիր, այն դարակից վերցրու ու բեր Ստենդալի հատորը», — դիմեց ինձ Չարենցը:

Ես մոտեցա Չարենցի հազվագյուտ գրքերով հարուստ գրադարանին, դարակից իջեցրի Ստենդալի հատորը, Եղիշեի ցուցումով բաց արի նըշված էջը, կարդացի նշված տողերը, որոնք պիտի ապացուցեին իր թեզը: Զարմանալի պայծառ, ֆենոմենալ հիշողություն...»⁵⁰:

Պատմում են, թե բանաստեղծն ինչպես էր ընթերցում գիրքը: Ամեն անգամ նոր գիրք գնելիս, նա «տուն էր գալիս, նստում ուր պատահի, գիրքը դնում ծնկներին ու երկյուղածությամբ թերթում, գիրք է...»⁵¹.

Տարփանքով, ինչպես պատանին,
Որ սիրում է իր լույս ընկերուհուն փարվել —
Ես սիրում եմ գրքերը թե նոր, թե հին,
Թե արվեստով գրված, թե անարվեստ:
Բայց և կամքով անշեղ, ինչպես դեկավարը,
Ինչպես այրն է հասուն ձգտում սիրած գործին, —
Ես սիրում եմ գրքերի աշխարհը,
Իմ խոհերի վսեմ այրուձին:

Տարիների հետ նա մշակել էր գրքի վրա աշ-

⁵⁰ Պողոսյան Հ., Հիշողություններ Չարենցի մասին: Աովետ գրակ., 1967, № 9, էջ 27:

⁵¹ Եղիշե Չարենց — 80, Տարեգրություն, Մատենագիտություն, Ասուլթներ: Եր., 1977, էջ 49:

խատելու իր եղանակը: Չարենցի գրադարանի բազմաթիվ գրքերի վրա պահպանվել են հեղինակային նշումները՝ մադրիգալիաները: Դրանք հնարավորություն են տալիս հետևելու բանաստեղծի մտքերի ընթացքին: Շատ գրքերից նա ընտրել և դուրս է բերել իր սրտին ու մտքին համահնչուն և ներդաշնակ մտքեր: Հաճախ շհամերաշխվելով և անգամ հակադրվելով տվյալ հեղինակի տեսակետին, նա միևնույն ժամանակ, գրքի ամբողջ կոնտեքստից դուրս բերելով առանձնացնում էր իրեն դուր եկած հատվածը կամ նախադասությունը:

Անվիճելի է, որ Չարենցը մեծ գրքասեր էր: Այդ կենտ բառով ասվում է գրեթե ամեն ինչ: Սակայն, ինչպես Չարենցն ինքը, այնպես էլ նրա գրքասիրությունը հախուռն է, կաղապար չհանդուրժող: Դժվար է որսալ Չարենցի եսը: Դեռ կենդանության օրոք նրա դիմանկարը ստեղծելու համար Սարյանը դիմեց եգիպտական դիմակների: Արդեն մեր օրերում Չարենցի հուշարձանը Ն. Նիկողոսյանը կերտեց փիլիսոփայական բազմադիմությամբ:

Չարենց-գրքասերի դիմանկարը նույնպես բազմադեմ է:

«Չարենցը ոչ թե գրքասեր էր, այլ գրամուլ»⁵², — գրում է Հ. Խանդամուրը (ընդգծումն

⁵² Խանդամուր Հ., Եղիշե Չարենց, («Հուշեր Եղիշե Չարենցի մասին»), էջ 412:

իմն է— Ն. Հ.): Ինչո՞ւմ էր դրսևորվում Չարենցի «գրքամուլությունը»: Հեղինակը չի փորձում տալ դրա պատասխանը, այլ շարունակում է. «Նա միշտ հեռախոսով իմանում էր, թե ինչ նոր գրքեր կան ուսական գրքերի գրախանութում և ինձ ուղարկում էր այս կամ այն գիրքը բերելու: Նրա գրադարանը կարճ ժամանակում լցվեց համաշխարհային գրականության գանձերով»⁵³:

Այստեղ տեղին է վկայաբերել Մարտիրոս Սարյանին. «Չարենցը մոլի գրասեր էր ու գիրքը լավ էր հասկանում»⁵⁴ (ընդգծումն իմն է— Ն. Հ.): Միանգամայն ստույգ և դիպուկ բնորոշում: Այո, Չարենցը մոլի գրքասեր էր: Գիրքը զգալու զարմանալի կարողության էր տիրապետում, որ միայն ընտրյալ գրքասերների մենաշնորհն է: Գրքերի հետ աշխատելիս սովորաբար դրանք բաց էր պահում իրեն հարկավոր էջերի վրա: Սերաֆիմա Ֆինսկայան հետաքրքիր մի դեպք է պատմում. Մի անգամ ես սենյակը մտա և մեքենայաբար, ասես ուզում էի փակել գրքերից մեկը: Նա ձեռքրս հեռացրեց ու ասաց.

— Չի կարելի, ես նրանց միշտ ավելի լավ եմ լսում, երբ փակված շեն լինում»⁵⁵:

⁵³ Խանդավուր Հ., Եղիշե Չարենց («Հուշեր Եղիշե Չարենցի մասին»), էջ 412:

⁵⁴ Նույն տեղը, էջ 182:

⁵⁵ Նույն տեղը, էջ 463:

Գրչակից ընկերների հետ Չարենցը հաճախ էր խորհրդածում գրքի և ընթերցանության արվեստի հարցերի շուրջ: Այդ գրույցներում նա դնում էր ընթերցանության հմտությունների մշակման, գեղարվեստական երկի ընթերցման վարպետության բարձրացման խնդիրը: Չարենցը գտնում էր, որ «Բանաստեղծն ընթերցելիս՝ ամենևին նման չէ սովորական և անգամ ոչ սովորական, բանիբուն ընթերցողին, նա գրական ստեղծագործության մեջ պետք է տեսնի բաներ, որ լավագույն ընթերցողն անգամ մանրադիտակով չի կարող իմանալ»⁵⁶: Օրագրային գրառումներից մեկում նա գրում է. «Այն, որ ես ընտրել եմ կյանքում գրողի մասնագիտությունը, ամենից առաջ ինձ համար թանկ ու անգնահատելի է նրանով, որ ես կարող եմ երբեմն ինձ թույլ տալ «ոչինչ չանել», — այսինքն պառկել ու կարդալ...»⁵⁷: Մեկ այլ առիթով նա ասել է. «Մարդ հնարավորություն ունենար՝ միշտ կարդար: Պառկեր ու կարդար: Ամեն մի գիրք մի աշխարհ է: Ո՞վ է ասել, չեմ հիշում: Լավ, կարևոր չէ: Ինչքան էլ կարդում ես՝ էլի կա ու կա: Ամենից շատ կարդացել է Տոլստոյը: Էհ, նրան ինչ: Մարդը գրաֆ էր, բա որ նա չկարդար, ե՞ս պիտի կարդայի, скажи, пожалуйста: Համ հնարավորություն ուներ, համ էլ երկար ապրեց:

⁵⁶ Նորենց Վ., «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», էջ 200:

⁵⁷ Չարենց Ե., Երկ. ժող., հ. 6, էջ 483:

Մենք ոչ հնարավորութիւն ունենք, ոչ էլ այդքան կապրենք»⁵⁸ :

Ընթերցանութիւնը Չարենցի համար բացի իր հիմնական նշանակութիւնից ունեցել է նաև լրացուցիչ ֆունկցիա: Դա կապվում է անմիջաբար Չարենցի ստեղծագործական մեթոդի հետ: Հայտնի է, որ նա շատ արագ էր աշխատում: Չարենցը մեկ գիշերվա մեջ է գրել «Մաճկալ Սաքոյի պատմութիւնը», «Ասպետականը», ընդամենը 3—4 օրում հիմնականում շարադրեց այնպիսի հզոր մի գործ, ինչպիսին է «Requiem alternam Կոմիտասի հիշատակին» պոեմը, 2—3 ամսվա ընթացքում գրեց «Գիրք ճանապարհի» բանաստեղծութիւնների և պոեմների գերակշիռ մասը: Գրելուց հետո շտապում էր տպագրել, որպեսզի իրեն ազատի ստեղծագործութեան կապանքներից և մինչև տպագրելը շարունակում էր աշխատել տվյալ երկի վրա: Չարենցի աշխատանքի մեթոդը յուրահատուկ է: Անդրադառնալով ձեռագրին, ոչ թե վերամշակում էր այն բացասելու իմաստով, այլ ստեղծում էր միանգամայն նոր տարբերակը՝ լրիվ ինքնուրույն: Եվ վերջնական օրինակը ծնվում էր այդպես՝ տարբերակից տարբերակ կատարելագործման ճանապարհով: Հասկանալի պատճառով Միք. Մազմանյանը գրում է. «...Նա սևագրութիւններ շուներ, ուներ վարիանտներ»⁵⁹ :

⁵⁸ Չարյան Ռ., Չարենցի հետ, էջ 357—358:

⁵⁹ Մազմանյան Միք., Չարենցի հետ, էջ 87:

Ավարտված գործը տպագրության հանձնելուց հետո Չարենցը սովորաբար ինքն իրենից «արձակուրդ» էր վերցնում: Կարված աշխատանքի անքուն գիշերներից հետո (Չարենցն աշխատում էր առավելապես գիշերները), այդ «արձակուրդները» նա անց էր կացնում «ընթերցանությամբ ու հաճախ փոխում էր միջավայրը: Այսպես հասունանում էր հետևյալ թեման»⁶⁰: Ահա հենց սա էր երկրորդ, լրացուցիչ ֆունկցիան, որ կատարում էր ընթերցանությունը նրա կյանքում.

Անտառների նման գրքեր կան թանձր ու մութ,
 կան օվկիանի՝ նման անհուն գրքեր,
 կան զեփյուռի նման, նման քամո՛ւ,
 կան, որ գգվում են մեզ, ինչպես ձեռքեր:

Կյանքի բոլոր ժամանակներում Չարենցի համար, որպես բանաստեղծական հանճարի խորհրդանիշ մնացին Դանթեն, Պուշկինը և Գյոթեն: Նրանց հետ Չարենցի հոգեկան-ստեղծագործական կապը ուժեղանում է հատկապես 30-ական թթ.: Սիրած գրողները քուն թե արթմնի ուղեկցում էին նրան: Աշխատասենյակի պատերից և գրասեղանի վրայից օր ու գիշեր նրան էին նայում մտերիմների դեմքերը՝ Դանթեի և Պետրարկայի Զիոտտոյի վրձնին պատկանող որմնանկարի արտատպությունը, Գյոթեն, Պուշկինը, հայրը՝ Աբգար աղան,

⁶⁰ Նույն տեղը, էջ 87:

վաղամեռիկ կիներ՝ Արփենիկը, Լեոնարդո դա
Վինչին և դա Վինչու վրձնած Հիսուսը.

Ահա դեմք, պատին Դանթեի
Հին նկարը՝ Պետրարկան կողքին.—
Ելել են նրանք դժոխքից
Եվ մտել դրախտն այնտեղից...
Դա— Զիոտտո կոչված նկարչի
Հանճարեղ Ֆրեսքի մի անկյունն է,—
Այսինքն՝ դրա կրկնությունը
Գունավոր, շքնաղ կատարած...
Իսկ ներքևը— Լեոնարդո դա Վինչու
Թախծադեմ «Հիսուսն» է— կանացի,
Պատանու դեմքով «Հիսուսը»։—
Ուրեմն էլ ինչ երազ...
Իմ սենյակն է, իմ պատն հարազատ՝
Իմ սիրած «Հիսուսով», որ անչափ
Նմանո՞ւմ է Արփիկին,— մանավանդ,
Երբ նա դազադո՞ւմ էր պառկած...

Զարեհնցի 1934—37 թթ. գրված ձեռագրերում
բազմաթիվ անավարտ ստեղծագործություննե-
րում հանդիպում են նրա սիրած պոետների և
գրական հերոսների անունները:

«Ֆաուստի» հեղինակին Զարեհնցը դիմում է
բազմաթիվ բանաստեղծությունների մեջ՝ «Պա-
տասխան Գյոթեին», «Ֆաուստ», «Գյոթեից» և
այլն: Զարեհնցի թարգմանությամբ պահպանվել
և մեզ են հասել Գյոթեի «Ֆաուստի»-ի առաջին
արարվածը և Գրետիսենի երգը, մի ամբողջ շարք
բանաստեղծություններ՝ «Բարեկամ...», «Երգ և

քանդակ», «Մատրուվակ», «Վենետիկյան էպիգրամներից», «Անակրեոնի գերեզմանը», «Թափառականի գիշերային երգը» և այլ գործեր: Չարենցը հավանորեն ծրագրել է «Ֆաուստը» թարգմանել ամբողջովյամբ: Նրա գրադարանում «Ֆաուստը» ներկայացված է երեք լեզուներով՝ հայերեն (Թիֆլիս, 1902), ռուսերեն (Մոսկվա-Լենինգրադ, 1928), գերմաներեն (Լայպցիգ, 1890): «Ֆաուստի» վերը նշված ռուսերեն հրատարակությունից բացի Չարենցի գրադարանում կա «Ֆաուստի» առաջին մասի ևս 3 այլ հրատարակություն: Նրա գրադարանում կա նաև Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» (Մոսկվա, 1933, ռուս. լեզ.) և «Հատընտիր քնարերգություն» (Մոսկվա-Լենինգրադ, 1933, ռուս.) ժողովածուն: Չարենցը մեծ բավականություն է ստացել էքերմանի «Զրույցներ Գյոթեի հետ» գրքի ընթերցանությունից և շատերին խորհուրդ էր տալիս կարդալ այն⁶¹: Ինչպես սիրած գրքերից շատերը, էքերմանի գիրքը նույնպես Չարենցի գրադարանում ներկայացված է երկու հրատարակությամբ:

«Ոչ մի բանաստեղծ, ոչ մի պոետ ինձ այնպես չի խաղաղեցնում, ինչպես Պուշկինը. հոգեկան ներդաշնակության բարձրագույն ձևը նրա մեջ եմ տեսնում միայն»⁶², — մի առիթով խոստովա-

⁶¹ Զարյան Ռ., Չարենցի հետ, էջ 358:

⁶² Նույն տեղը:

նել է Չարենցը: Նույն միտքն է շարադրել իր օրագրային գրառումներից մեկում. «Ամենից ավելի ես սիրում եմ կարդալ Պուշկինին:— Երբ ես տխուր ու հոգնած եմ լինում և ուզում եմ վարձատրել ինձ մեծադույն հաճույքով— ես փակում եմ իմ տան դռները, պառկում— և սկսում եմ կարդալ Պուշկինը— որ գրվածքն ուզում է լինի...»⁶³: Չարենցը մեծապես ազդվել է Պուշկինից: Այդ ազդեցությունը հատկապես զգալի է նրա «էպիկական լուսաբաց» ժողովածուում: Սիրած պոետի կերպարին Չարենցը դիմում է իր բազմաթիվ ստեղծագործությունների մեջ, ինչպես.

Օ՛, Ալեքսանդր,— ո՛չ հուշակ, ո՛չ գանձ
 Ես չեմ երազում օրերիս նաշում:
 — Ախ, կյանքում եթե տրվե՛ր ինձ հանկարծ
 Մի «Բուրգինյան աշուն» ..

Պուշկինի ստեղծագործություններին Չարենցը ծանոթացել է դեռևս պատանեկան տարիներին: Բանաստեղծի հուշագիրներից Վիվանի (Հովհաննես Զիդեջյան) վկայությամբ, Չարենցն իր գրական անունն ընտրել է Պուշկինի «Անշար» բանաստեղծության վերնագիրը շրջելով⁶⁴:

Ընտրվելով Պուշկինի մահվան 100-ամյակի

⁶³ Չարենց Ե., Երկ. ժող., հ. 6, էջ 483:

⁶⁴ Վիվան, Չարենցի հետ («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 284:

հավերժացման հանրապետական կոմիտեի նախագահ և միութենական հանձնաժողովի անդամ, Չարենցը բուռն գործունեություն էր ծավալել նրա երկերի հրատարակման ուղղությամբ⁶⁵։ Նա ընդգրկվել էր նաև Պուշկինի երկերի ակադեմիական հրատարակության խմբագրական խորհրդի կազմում։ Չարենցը հանձն էր առել թարգմանելու Պուշկինի «Պղնձե հեծյալը», որը սակայն չի պահպանվել։ Պուշկինը Չարենցի համար «համաշխարհային գրականության բանաստեղծության արևն է», Բանաստեղծի գրադարանում տեղ են գտել ինչպես նրա ստեղծագործությունների տարբեր տարիների հրատարակություններ, այնպես էլ նրա մասին գրված հուշագրություններ ու մենագրություններ, ինչպես Վ. Բրյուսովի «Իմ Պուշկինը» (Մոսկվա-Լենինգրադ, 1929), Ն. Աշշուկինի «Կենդանի Պուշկինը» (Մոսկվա, 1934), Դ. Բլագոյի «Պուշկինի ստեղծագործության սոցիոլոգիան» (Մոսկվա, 1931), Մ. Գերշենզոնի «Պուշկինի իմաստնությունը» (Մոսկվա) և այլ գրքեր։ Ընդհանուր առմամբ Չարենցի գրադարանում ավելի քան 30 պուշկինյան հրատարակություն կա։ Գրեթե նույնքան է նաև Պուշկինի և նրա ստեղծագործության մասին պատմող գրականությունը։ Չարենցի հավաքածուում կան Պուշկինի երկերի տարբեր տարիների հրատարակու-

⁶⁵ Չարենց Ե., Երկ. ժող., հ. 6, էջ 358—363։

թյուններ, ինչպես կայսերական գիտությունների ակադեմիայի, Բրոկհաուզի և Եֆրոնի 6-հատորյակի, «Academia»-ի 9-հատորյակի գրքերից: Պուշկինի հատորները Չարենցը ձեռք է բերել թե՛ Երևանում և թե Մոսկվայում: Երկու գիրք, Պուշկինի «Եվգենի Օնեգինը» և «Table talk» ժողովածուն Չարենցը ձեռք է բերել 1925 թ. ապրիլ-մայիս ամիսներին Բեռլինում:

Չարենցի գրադարանը նրա հետաքրքրությունների իսկական հայելին է: Չարենցին սրտամոտ բոլոր հեղինակները ներկայացված են բազմաթիվ հրատարակություններով: Այսպես, նրա գրադարանում տեղ են գտել 5 գիրք Անդրեյ Բելուց, 9-ը՝ Գոգոլից, 18-ը՝ Գորկուց, 7-ը՝ Թումանյանից, 24-ը՝ Մայակովսկուց, 9-ը՝ Մերեժկովսկուց, 8-ը՝ Պաստերնակից, 30-ը՝ Լև Տոլստոյից, 7-ը՝ Վյաչ. Իվանովից և այլն:

Չարենցի գրադարանում իր արժանի տեղն ունի նաև հասարակական-քաղաքական գրականությունը: Բանաստեղծն ունի Մարքսի, էնգելսի և Լենինի աշխատություններից շատերը:

Հետաքրքիր և հարուստ են նաև փիլիսոփայական և հոգեբանական գրականության բաժինները⁶⁶: Չարենցի գրադարանում կարելի է գտնել Արիստոտելի, Պլատոնի, Պլուտարքոսի, Սպինո-

⁶⁶ Չարենց Անահիտ, Չարենցի ձեռագրերի աշխարհում: Եր., 1978, էջ 97—117

զայի, Ֆրեյդի, Շպենգլերի, Նիցշեի գրքերը: Գրադարանում կա 10 գիրք Ֆիշեր Կունոյից, որոնք Ֆիխտեի, Շելլինգի, Սպինոզայի, Լեյբնիցի, Հեգելի, Կանտի, Դեկարտի կյանքին և գործունեությունը նվիրված հատորներ են:

Կյանքի վերջին տարիներին Չարենցի համար ընթերցանությունը շատ հաճախ իրականությունից դուրս գալու միջոց էր, գեղարվեստի և գիտության աշխարհում ազատ ապրելու հնարավորություն: Օրերով դուրս շէր գալիս տանից և աշխատասենյակի թախտին պառկած անվերջ կարդում էր ու կարդում: Գրքի և ընթերցանության մասին Չարենցն այդ տարիներին Ռ. Չարյանին ասել է. «Գիրքը խմիչքից ոչնչով պակաս չէ, իհարկե, լավ գիրքը: Խմողը դարձը խեղդում է հեղուկի մեջ, կարդացողը՝ գրքի: Կարդում եւ ու գնում մի այլ աշխարհ»⁶⁷:

Կբանան ոմանք երգերս գուցե,
Կթերթեն մի քիչ, կկարգան տողեր,
Դանդաղ շարժումով գիրքը կգոցեն,
Խորհելով, որ լավ երգեր եմ թողել...

«Ծ. Չարենցի կորուստը հավիտյան ողբալի է, և եթե նա ողջ մնար, դեռ ինչե՛ր կարող էր տալ: Համենայն դեպս, այն ինչ-որ տվեց, դա մի ան-

⁶⁷ Չարյան Ռ., Չարենցի հետ, էջ 358:

մահ կոթող է հայ գրականության մեջ»⁶⁸, — գրել է Ավ. Իսահակյանը:

Չարենցը գնաց, գումարվեց մեր ժողովրդի «լուսավոր ու վեհ» ժառանգությանը: Գնաց, բայց բոլոր գալիք սերունդներին թողեց իր գրքերի աշխարհը՝ որպես անեզր տիեզերք:

⁶⁸ Իսահակյան Ավ., *Չարենցի հետ վեհետիկոմ* («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»), էջ 20:

ՀԻՇՍԱՏԱԿՎԱԾ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալազան Վ., *Հուշեր*.— Եր.: Հայաստան, 1967.— 376 էջ:
2. Ալեքսանդրյան Ա. Մ., *Պատանի Չարենցի հետ: Հուշեր*.— Եր.: Սովետ. գրող, 1979 — 94 էջ:
3. Աղաբաբյան Ս. Բ., *Եղիշե Չարենց: Մենագրություն: Երկու հատորով*.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973—1977:
Գիրք առաջին.— Եր.: 1973.— 440 էջ:
Գիրք երկրորդ.— Եր.: 1977.— 397 էջ:
4. Անանյան Գ. Գ., *Եղիշե Չարենցը և ուս պրականությունը*.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1979.— 343 էջ:
5. Անանյան Գ. Գ., *Չարենցի հետ*.— Եր.: Լույս, 1980.— 156 էջ:
6. Բես Գ. Բ., *Իմ Չարենցը: (Հուշեր)*.— Եր.: Սովետ գրող, 1979.— 335 էջ:
7. Բես Գ. Բ., *Հուշանովելներ*.— Եր.: Սովետ. գրող, 1985.— 344 էջ:
8. Դաշտենց Խ., *Ընդհալ այգաբացի երգիչը*.— Եր.: 1967.— 30 էջ:— («Գիտելիք» ընկերություն):
9. Դավթյան Հ., *Գեղարվեստական գրականության և գրականագիտության մատենագիտություն: Ուս. ձեռնարկ*.— Եր.: 1981.— 87 էջ:

10. Եղիշե Չարենց—80: Տարեգրություն, Մատենագի-
գիտություն, Ասույթներ.— Եր.: Սովետ. գրող, 1977.— 80 էջ.—
(Գրքասերի գրադարան, ՀՍՍՀ գրքասերների ընկերություն):

11. Չարյան Ռ., Եղիշե Չարենց:— Չարյան Ռ., «Հու-
շապատում» գրքում: Գիրք 1.— Եր.: Հայաստան, 1975,
էջ 69—107:

12. Քամրազյան Հ. Ս., Եղիշե Չարենց: Ուսումնասի-
րություն.— Եր.: Սովետ. գրող, 1981.— 472 էջ:

13. Քամրազյան Հ. Ս., Երիտասարդ Չարենցը.— Եր.:
Հայաստան, 1974 — 118 էջ:

14. Կապուտիկյան Ս. Բ., Իմ ժամանակը: Հրապարա-
կագրություն, ուղեգրություն — Եր.: Սովետ. գրող, 1979.—
343 էջ:

15. Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին: (Չարեն-
ցի հետ).— Եր.: Հայպետհրատ, 1961.— 392 էջ:

16. Հովնան Գ., Եղիշե Չարենց: Ստեղծագործության
միջազգային արձագանքները.— Եր.: Սովետ. գրող, 1978.—
66 էջ.— (Գրքասերի գրադարան, ՀՍՍՀ գրքասերների ընկ.):

17. Հուշեր Եղիշե Չարենցի մասին: Ժողովածու/Կազմ.
Ծ. Հովհաննիսյան.— Եր.: Սովետ. գրող, 1986.— 504 էջ:

18. Մահարի Գ., Չարենց-նամե.— Եր.: Հայաստան,
1968.— 104 էջ:

19. Նորենց Վ., Հուշեր և արձագանքներ.— Եր.: Հա-
յաստան, 1968.— 401 էջ:

20. Չարենց Ա., Չարենցի ձեռագրերի աշխարհում.—
Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1978.— 179 էջ.— (ՀՍՍՀ ԳԱ Մ. Ա-
րեղյանի անվ. գրակ. ինստ-տ):

21 Չարենց Ե., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6.—
Եր.. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967.— 802 էջ:

22. Չարեեց Ե., Գրականության մասին: (Ժողովածու).—
Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1957.— 216 էջ:

23. Չարենցյան ընթերցումներ: Գիրք 4.— Եր.: Երևանի
համալս. հրատ., 1973.— 360 էջ:

24. Պողոսյան Հո., Անմոռանալի Չարենցը:— Պողոս-
յան Հո., «Արձագանք» գրքում.— Եր.: Հայաստան, 1973,
էջ 111—137:

ՀՍՍՀ Գրքատերերի ընկերություն

Ներսես Վարազդատի Հայրապետյան

ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ԳԻՐՔԸ

Общество книголюбов Армении

Нерсес Вараздатович Айрапетян

ЧАРЕНЦ И КНИГА

(На армянском языке)

Издательство «Советакан ցрох»

Ереван — 1987

Խմբագիր՝ Ա. Ե. Մանուկյան

Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Վ. Ք. Մանդակունի

Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան

Վերստուգող սրբագրիչ՝ Է. Պ. Պողոսյան

Հանձնված է շարվածքի 9.11.1987 թ.:

Ստորագրված է տպագրության 2.12.1987 թ.:

*ՎՖ 09015: Ֆորմատ՝ 70×90¹/₃₂: Թուղթ՝ № 1: Տպագրու-
թյունը՝ բարձր: Տառատեսակը՝ «Գրքի սովորական»:*

*2,34 պայմ. տպագր. մամ., 2,55 պայմ. ներկ. թերթ, 1,7
հրատ. մամ.: Տպաքանակ՝ 10000: Պատվեր՝ 892:*

Գինը՝ 48 կոպ.:

ՀՍՍՀ Գրքասերների ընկերություն, Երևան—1, Թումանյան 21:

Общество книголюбов Армении, Ереван 1,

ул. Туманяна, 21

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9,

Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9,

ул. Теряна, 91

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի

առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան,

Երևան—1, Թումանյան 23/1:

Типография № 6 Госкомитета по делам издательств,

полиграфии и книжной торговли Арм ССР,

Ереван 1, ул. Туманяна, 23/1

Ահն, որ եւ հի.

որ իմն հր առաջ,

Ահարտն զի հասնելի

և ոչ մի գրքում.

Ե. 215ԲԵՆՉ